ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 11-Ա

2017ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՇՏԱԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՇՏԱԲԻ ՊԵՏԻ, ՇՏԱԲԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով 2017թ ապրիլի 2-ին կայանալիք ՀՀ ազգային ժողովի հերթական ընտրությունները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք ՀՀ ազգային ժողովի ընտրությունների անցկացման հանրապետական կուսակցության քարոզչական շտաբ ստեղծել Վարդանաշեն համայնքի 1-ին փողոց 20-րդ շենքը:
2. Հանրապետական կուսակցության քարոզչական շտաբի պետ նշանակել Վարդանաշեն համայնքի ղեկավար Արթուր Մանուկյանին:
3. Հանրապետական կուսակցության քարոզչական շտաբի պետի տեղակալ նշանակել համայնքապետարանի աշխատակից Սուրիկ Խաչատրյանին:
4. Հանրապետական կուսակցության քարոզչական շտաբի աշխատանքների համակարգող օպերատոր նշանակել համայնքապետարանի աշխատակից Անգին Վարդևանյանին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

20 17 թ. փետրվարի 24
գ.Վարդանաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Վարդանաշեն, 077.07.00.10, vardanashen.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 02

ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով և հաշվի առնելով 2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք ընտրությունները

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2017թվականի փետրվարի 23-ից Վարդանաշեն համայնքի ղեկավար՝ Արթուր Մանուկյանին տրամադրել արձակուրդ 27աշխատանքային օր տևողությամբ:

2. Արթուր Մանուկյանին աշխատանքի մեջ համարել 2017թվականի ապրիլի 5-ից:

3.Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ լիազորությունների կատարումը վերապահել ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ Ռուզան Սարգսյանին:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 17 թ. փետրվարի 23
գ.Վարդանաշեն